ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ III ԴԱՐՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երրորդ դարի սկզբին Սասանյանների դինաստիական հեղաշրջումը նոր քաղաքական հարաբերություններ ստեղծեց Մերձավոր Արևելքում։ Սասանյանների բարձրացումը պետք է որ անհանգստացներ և Արշակունյաց Հայաստանին։ Արտաշիրի գահակալության հենց երկրորդ տարին նրանց միջև անխուսափելի բախում առաջացավ, որ երկար տևեց։ Սասանյան հեղաշրջումը շատ բանով ազդեց հայ ժողովրդի պատմության հետագա ընթացքի վրա։

Այդ հանգամանքը պատմագիտության մեջ արտացոլված է կատեգորիայի ձևով։ Քաղաքական նոր իրադրությունը հայոց համար դիտվում է իբրև ազգային աշխարհայեցողության հեղաբեկում, որ ճակատագրական դեր խաղաց «հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրության մեջ»[1]*։*

Մանանդյանը գտնում է, որ Սասանյաններից առաջ, այսինքն մինչև III դարի առաջին կեսը, Հայաստանն ուներ պարսից կամ արևելյան կողմնորոշում, III դարի առաջին կեսից՝ հռոմեական կամ արևմտյան։ Մինչև III դար Իրանը վտանգավոր չէր Հայաստանի համար, «մինչդեռ հռոմեական «բարեկամությունը» կորուստ էր սպառնում Հայաստանի ոչ միայն քաղաքական, այլ նաև կուլտուրական ինքնուրույնությանը»[2]*։ III դարից Հայաստանն աշխատեց մերձենալ ու բարեկամանալ հռոմեական կայսրության հետ։ «Նրանց արևմտյան այս կողմնորոշումը Հայաստանի համար ունեցավ ոչ միայն քաղաքական, այլև կուլտուրական մեծ հետևանքներ»*[3]*,— գրում է Մանանդյանը։ Եվ, որ կարևոր է, արևելյան կողմնորոշումը դիտվում է իբրև ազգային նախասիրություն, որ հենվում էր պարսից հետ հայերի մշակույթի ու սովորույթների մերձակայության վրա, իսկ շրջադարձը դեպի Արևմուտք պայմանավորվեց Արշակունիների և Սասանյանների դինաստիական թշնամանքով։*

Ինչպես տեսնում ենք, կողմնորոշմանը հայ ժողովրդի պատմության մեջ տրվում է լծակի դեր երկու սկզբունքների միջև՝ Արևելք և Արևմուտք։ Դրանով են որոշվում Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքի շրջանները և պարբերացվում մի ամբողջ ժամանակահատված։

Կողմնորոշումը, սակայն, ավելի քաղաքական նախապատվություն է, մեծ կամ վճռող տերությունների նկատմամբ երկրի վերաբերմունքը։ Կողմնորոշումը կարող է արտահայտվել ժամանակագրությամբ, բայց դրանով պարբերացնել նշանակում է պատմությունը զրկել խորքից։

---

1 В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа. Ереван, 1940, էջ 42—43։

2 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, Երևան, 1957, էջ 71։

3 Նույն տեղում, էջ 70։

Ագաթանգեղոսն առաջինն է, որ Սասանյան Իրանի և Հայոց միջև բռնկված հակամարտությունը բացատրում է դինաստիական առեղծվածությամբ։ Արշակունի Խոսրովը արշավանքի է դուրս գալիս Սասանյան նոր գահակալի դեմ՝ ապանված Արտավանի վրեժը լուծելու. «Ուխտ եդեալ միանդամայն,— գրում է պատմիչը,— վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանկանելն իւրեանց ի տերութենէն, սպառ սպուռ ջանայր զվրէժ խնդրել մեծաւ քինու նախանձաբեկ լինելով»[4]։ Խոսրովն, իհարկե, փորձեց օգտվել դինաստիական զգացումներից, բայց ապարդյուն։ Նրան չհաջողվեց համախմբել Արշակունիներին և ոտքի հանել Սասանյան Պարսից դեմ. «Թէպէտ և էր Խոսրովու դեսպան արարեալ, զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն... սակայն տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր, զի միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն»[5]։ Ինչպես տեսնում ենք, ներդինաստիական զգացումները քիչ բան արժեն քաղաքական շահագրգռությունների դիմաց։

Իրանում Արտաշիրը հեշտ անցավ իշխանության։ Նրան ճանապարհ տրվեցին հենց իրենք՝ պարթևները, զի հնազանդեցան և ծառայութեան մտին համբարձելոյ թագաւորութեան Ստահրացւոյն, և ընդ նմին միամտեցան»[6]։ Առաջին Սասանյանների արքունիքում իրենց ներկայացուցչությունն ունեին պարթևական տները՝ Կարենյան, Սուրենյան, Սպահպատ և Վարազ[7]։ Անշուշտ, նրանց ազգակից Արշակունիների դինաստիական շահերը քիչ են հետաքրքրել, որ կարողացել են պահել իրենց տեղը պետական կազմում։

Հռոմը երկար ժամանակ, Ալեքսանդր Սևերոսից մինչև Գալլոս, չէր կարողանում առաջին Սասանյաններին ցույց տալ որևէ լուրջ դիմադրություն։ Բայց նույնիսկ Միսիխեսի և Բարբարիսոսի ճակատամարտերից հետո, ուր Շապուհը Հռոմի դեմ կարևոր հաղթանակներ տարավ, Հայաստանը դեռ մընում էր աննվաճ։ Շապուհը նրան կարողացավ ընկճել միայն... Արշակունիների օգնությամբ։

Զոնարասից տեղեկանում ենք, որ 252/3 թ., Գալլոս կայսեր ժամանակ, ինչ-որ դեպքեր են տեղի ունեցել Հայաստանում։ Հայոց արքան՝ Տրդատը, փախել է հունաց կողմերը, իսկ որդիները ապավինել են պարսից՝ «անկան առ պարսիկս»[8]։ Ինչպես երևում է, նրանք համաձայնության են եկել Շապուհի հետ։ Գահ է բարձրանում Խոսրովը՝ Տրդատի որդիներից մեկը։ Այստեղ էլ դինաստիական նախանձախնդրություն դժվար է գտնել։

---

4 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, Ա, 19։

5 Նույն տեղում, Ա, 20։

6 Նույն տեղում։

7 Քաարա ի Զարդուշտի (SKZ) արձանագրության մեջ, ուր Շապուհ I-ը տալիս է Արտաշիր I-ի և իր արքունական կազմը, հիշատակված են Կարեն, Սուրեն և Վարազ պարթևական տները (տե՛ս M. Springling, Third Century Iran Sapor and Kartir, Chicago, 1953 էջ 18)։ Խորենացու համաձայն Ասպահապետ և Սուրենյան տները գործակցել են Սասանյան Արտաշիրին, իսկ Կարենյանը՝ ոչ։ «Երկու ցեղք Պահլաւին, որ Ասպահապետի և Սուրենի Պահլաւն անուանին, նախանձ պահելով ընդ թագաւորեալ ցեղին իւրեանց հարապատութեան ազգին, որ է Արտաշեսին՝ կամաւ յանձն առին թագաւորել Արտաշրի որդւոյ Սասանայ» («Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, Բ, 71)։

8 „Zonaras epitome historiarum", XII, 21.

Խոսրովը, որ հավանաբար փորձել էր դործադրել Վալերիանոս կայսեր, սպանվում է պարթև Անակի կողմից Շապուհի թելադրանքով կամ, ինչպես Եղիշեն է վկայում, նրան սպանում են եղբայրները, որոնք արդեն մի անգամ Սասանյաններին հավաստիացրել էին իրենց հավատարմությունը։ Ամեն դեպքում, Արշակունի արքան մահացու վերք է ստանում Արշակունի ձեռքով։

Սասանյաններն իրենք Արշակունիների նկատմամբ անիսուն չարություն չեն տածում։

Սասանյան զորքերը Հայաստան են մտնում 260 թ.։ Նախարարները թողնում են երկիրը կամ փակվում ամրոցներում. «Բաղթեալ նախարարքն Հայոց հանդերձ ազգաւն Արշակունեաց ի Յոյնս ապաւինին»[9]։ Որմիզդ-Արտաշիրը՝ Շապուհի որդին, դառնում է «Հայաստանի մեծ թագավոր»։ Նա վարում է մեղմ և հանդուրժող քաղաքականություն, վերադարձնում է նախարարներին և պաշտպանում թագից մեկուսացած Արշակունիների բոլոր առանձնաշնորհումները. «Նա և զԱրշակունիսն զմեկուսացեալսն ի թագէն և յԱյրարատն բնակելոյ. կարգէ ի նոյն տեղիս մտիւք և ոռճկօք, որպէս և էին»[10]։ Նրա կառավարման մասին պատմիչը գրում է. «Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէր»[11]։ Եթե Արտաշիրը նախկին կարգերն է հաստատում և գեղեցկորեն կարգավորում Հայոց աշխարհը, երկիրն առիթ չուներ նրանից դժգոհելու։

Որմիզդ-Արտաշիրին հաջորդում է Ներսեհը, որ Շապուհ I-ի որդիներից էր։ Նա հավակնում էր պարսից գահին և այդ հողի վրա պայքար է ծավալում իր կրտսեր եղբոր՝ Վահրամ I-ի դեմ։ Պայքարը տևում է մինչև 293 թ., երբ նա վերջապես փոխարինեց տապալված Վահրամ III-ին։ Սասանյան Ներսեհի՝ իբրև «Հայաստանի թագավոր» և պարսից Սասանյան գահակալների միջև հակամարտությունն այնքան սուր բնույթ է կրում, որ Ներսեհը փորձում է առանձին դաշինք կնքել Հռոմի հետ հակառակ Իրանի։ Իսկ Վահրամ II-ը համաձայնության է գալիս Դիոկղետիանոսի հետ և ճանաչում Տրդատի գահակալական իրավունքը։ Նա դրանով քաղաքական ուժ է ստեղծում Ներսեհին դիմագրավելու համար[12]։ Հատկանշական է, որ Տրդատը Ֆարկին-Տիգրանակերտի արձանագրության մեջ հարգանքով և երախտագիտությամբ է արտահայտվում Սասանյան գահակալի մասին, կոչելով նրան աստված-արքա։

Այդպիսով, գահի վրա Արշակունիների վերահաստատմանն օգնեցին իրենք Սասանյանները։

Ինչպես տեսնում ենք ոչ միայն Արշակունիների, այլև Սասանյանների մոտ միջդինաստիական հակասությունը տեղի է տվել ներդինաստիական պայքարի, ուր շատ ավելի որոշակի են դրսևորվում քաղաքական շահագրգռությունները։

Առաջին Սասանյաններից հետո էլ դինաստիական չարության հետքեր դժվար է նկատել իբրև ընդհանուր քաղաքականություն։ Բայց կարող էին այդպիսի զգացմունքներ բորբոքվել, եթե դա անհրաժեշտ էր և եթե դա ծառայում էր քաղաքական նկատառումներին։

---

9 Խորենացի. Բ, 76։
10 Նույն տեղում. 77։
11 Նույն տեղում։
12 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, N 3, էջ 160—172։

IV դարի վերջերին, երբ Հայաստանի մեծագույն մասը Պարսից դերիշխանության տակ էր, Սասանյանները առիթներ ունեին Արշակունիներին դահից մեկուսացնելու, բայց այնքան էլ մեծ կիրք չեն արտահայտում։ Վռամշապուհից հետո Հազկերտը ընդունում է նախարարների միջամտությունը և թագը վերադարձնում Խոսրովին, որ արդեն գահընկեց էր արվել։ 387 թ. Հայաստանը բաժանվեց Հռոմի և Պարսկաստանի միջև։ Հռոմեական մասում հայոց թագավորությունը շուտով վերացավ և Մեծ Հայքի արևմտյան հատվածը դարձավ Հռոմի պրովինցիա, բայց արևելյան հատվածում շարունակվեց Արշակունիների իշխանությունը մինչև 428 թ.։ Սասանյան Իրանը կարծես ավելի էր հակված Հայաստանում պահպանելու Արշակունիների դինաստիական ստատուսը, քան Հռոմը։ Ինքնուրույնությունը թերևս ավելի հատուկ էր հռոմեական Արևմուտքին։

Բախումը և նրա հաճախականությունը Իրանի և Հայաստանի միջև դինաստիական հակամարտության հետ կապ չունի։ Դա պետք է այդպես լիներ, միևնույն է, հայոց գահին նստած էին Արշակունիները թե այլ ոք։ Սասանյան Իրանն իր առջև խնդիր էր դրել վերականգնել վաղեմի Աքեմենյան աշխարհակալությունը և շարժվում էր արևմուտք՝ Հռոմի փոքրասիական տիրապետություններ։ Իսկ Հայաստանն ընկած էր այդ ճանապարհին։ Հայաստանը և Հռոմը ապրում էին նույն տագնապը, և հայերն ավելի հաճախ էին դիմում Հռոմին, բայց և նույն եռանդով նրանք եզրեր էին փնտրում Իրանի հետ։

Տեսնենք, սակայն, ինչով է առնչվում քրիստոնեական դարձը արևմտյան կամ հռոմեական կողմնորոշման հետ։

Տրդատի կողմից քրիստոնեության ընդունումը պետք է, որ տեղի ունեցած լինի 298—304-ի միջև։ Դասական բանասիրությունը հիմնականում կանգնած է այդ տեսակետի վրա։ Այդպես են մտածում Չամչյանը, Օրմանյանը, Տաշյանը, Ասատուրյանը[13] և ուրիշներ։

Բանասիրության մեջ զուգահեռ ստեղծվել են և այլ տարբերակներ։ Գուդշմիդը դարձը որոշում է 261 թ., Տեր-Միքելյանը՝ 280—282 թթ., իսկ իր կազմած ժամանակագրական աղյուսակի համաձայն ստացվում է 293—295 թթ.[14]։ Սեն Մարտենը ճիշտ է գտնում 276-ը։ Հառնակը հաշվում է 285—290 թթ., Տուրնեբիզը՝ 290—295 թթ.[15], Լեոն հավանական է համարում 280—290 թթ., Քասունին՝ 291 թ., Մակդերմոտը՝ 294 թ., Գաթրճյանը՝ 305—310 թթ., Սարգիսյանը՝ 310—311 թթ., Մալխասյանը վերադառնում է 279-ին, Ակինյանը՝ 219 թ., Հրանտ Արմենը՝ 276 թ.[16]։

---

13 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 387—395։ Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 94։ Հ. Տաշյան, Ագաթանգեղոս առ Գևորգայ ասորի եպիսկոպոսին, Վիեննա, 1891, էջ 143։ Հ. Ասատուրյան, Քաղաքական վերաբերութիւն ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ, Վենետիկ, 1912, էջ 263։

14 Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի դրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 266, ծան. 21 և էջ 277, ծան. 22։

15 Տե՛ս F. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1910, էջ 428—444։

16 Լեո, Երկերի ժողովածու, հատ. I, Երևան, 1966, էջ 421։ Ե. Քասունի, Ժամանակագրական ճշտումներ հեթանոս հայ Արշակունյաց պատմության, «Ակոս», 1953, ԺԳ, № 3—7։ Brian MacDermot, The conversion of Armenia in 294 A. D. („Revue des études Arméniennes", VII, 1970, էջ 281—359)։ Հ. Գաթրճյան, Տիեզերական պատմութիւն, Բ,

Այս տարբերակներն առաջացել են նրանից, որ պատմագիտության համար որոշակի կամ հաստատ չէ դարձի թվագրման ելակետը՝ Տրդատի գահակալման տարին։ Ազգային աղբյուրները Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը կամ Խոր Վիրապից դուրս գալը և քարոզչության սկիզբը նշում են Տրդատի թագավորության ժամանակով, բայց այն հարցում, թե երբ է թագավորել Տրդատը, նրանք միաբան չեն։

«Գրեցաք ի մերումս պատմութեան միանգամ եւ երկիցս յաղագս Տրդատայ թագաւորելոյն, թէ ե՞րբ եւ յորո՞ւմ ժամանակի եղեւ։ Բայց ոչ միաբանէին ընդ միմեանս Զենոբ եւ Մովսէս վասն նորա,— գրում է Ուխտանեսը,— զի Զենոբ ի Պռոբայ ասէ թագաւորեալ Տրդատայ... Իսկ Մովսէս ի Դիոկղետիանոսէ ասէ՝ թագաւորեալ։ Վկայէ եւ այսմ Գիրք Կայսերացն»[17]։ Ինչպես տեսնում ենք Ուխտանեսը տարակուսում է՝ Պրոբոսի ժամանա՞կ (276—282) է Տրդատը գահակալել, թե՞ Դիոկղետիանոսի (284—305)։ Առաջին հավանականության վրա պատմիչները շատ չեն պնդում։ Իսկ եթե ճիշտ է երկրորդը, ապա Դիոկղետիանոսի ո՞ր տարում Տրդատը ժառանգեց իր նախնիների գահը։ Այստեղ էլ աղբյուրները տարամետ են։ Սամուել Անեցին, օրինակ. Տրդատի թագավորության սկիզբը դնում է Դիոկղետիանոսի երկրորդ տարին «ըստ Մովսիսի Հայոց պատմագրի» և ոչ իններորդ կամ առաջին՝ «ըստ ոմանց»[18], իսկ Սեբեոսը Տրդատի գահակալությունը հաշվում է Դիոկղետիանոսի 15-րդ տարուց և վերջապես, պատմիչների մոտ պարսից արքաների և Խոսրովի ու Տրդատի ժամանակագրական զուգահեռները ենթադրում են ավելի վաղ շրջաններ։

Բարդությունը դրանից է ծագում, բայց հայտնի է դարձի վերջին սահմանը՝ 310/1։ Եվսեբիոս Կեսարացին հաղորդում է, որ Մաքսիմիանոս կայսրը պատերազմի է դուրս գալիս հայերի դեմ, որովհետև նրանք քրիստոնյա էին։ Պատերազմը տեղի է ունեցել 311 թ.։ Այդ նշանակում է, որ հայերը մինչև 311 թ. արդեն քրիստոնյա էին։ Այդպիսով դարձի թվագրման համար մենք ունենք մի կորագիծ, որի սկիզբը անորոշ է, բայց ավարտվում է 311-ով։

Մանանդյանն իր «Քննական տեսության» մեջ առաջարկում է նոր տարբերակ՝ 314, որ կտրում է կորագիծը։

Հ. Մանանդյանի այս նոր թվագրումը փորձեց հաստատել Պ. Անանյանը առանձին աշխատությամբ[19]։ Նա անվերապահորեն ընդունում է Մանանդյանի սահմանած ժամանակագրությունը և հենվելով Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության վրա, գտնում, որ Գրիգորի ձեռնադրումը կարող էր տեղի ունենալ անպատճառ 314 թ.։

Այդպիսով, 314-ը դուրս վանեց տրադիցիոն թվականը և ընդհանուր ճանաչում ստացավ[20]։

էջ 477։ Բ. Մարդիսյան, Ագաթանգեղոս և իր բազմադարյան գաղտնիքն, Վենետիկ. 1890. էջ 71, ծան. 73։ Ս. Մալխասյանց, Ե՞րբ են հայերն ընդունել քրիստոնեությունը. «Էջմիածին», 1944, Ա, էջ 22—26։ Ն. Ակինյան, Ս. Գրիգոր Լուսավորիչ. «Հանդես Ամսօրյա», 1949, ԾԳ, էջ 3—58։ Հրանդ Ք. Արմեն, Պատմական քննարկումներ, Պեյրութ, 1968, էջ 174—189։

17 Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց. Վաղարշապատ, 1871, էջ 111։

18 Սամուել Անեցի, էջ 63։

19 Տե՛ս Պ. Անանյան, Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության թվականը և պարագաները, Վենետիկ, 1960։

20 Գ. Սարգսյան, Ֆեոդալական հասարակարգի հաստատումը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 222—225։ Լ. Խաչիկյան, Օտարալեզու հայ

Մանանդյանի թվագրման հիմքում ընկած է մեզ ծանոթ դրույթը իբրև պոստուլատ. քրիստոնեությունը Հայաստանում արևմտյան կողմնորոշման արդյունք էր և մուտք գործեց Հռոմի ազդեցությամբ։ Դա հնարավոր էր միայն Միլանի հրովարտակից հետո, որ հրապարակվել է 313 թ.։ Հայաստանը քրիստոնեություն կարող էր ընդունել 313-ից ոչ շուտ։ «Վերաբերմունքը դեպի քրիստոնեությունը Հայաստանում ևս հավանաբար փոխվել էր 313 թվից հետո, երբ համաձայն Միլանի հրովարտակի քրիստոնեությունը ճանաչվել էր հռոմեական պետության մեջ, որպես աղատ և իրավահավասար կրոն»,— գրում է Մանանդյանը։ «Տրդատ Գ-ի և հայերի քրիստոնեական դարձը պետք է ենթադրել 313 թվից հետո»[21],—կարդում ենք նույն տեղում։

Մանանդյանի տեսությունը գալիս է Ա. Աննինսկուց։

Պետք էր հաղթահարել Եվսեբիոս Կեսարացու տեղեկությունը, որի համաձայն մինչև 313 թ. հայերն արդեն քրիստոնյա էին։

Աննինսկին գտնում է, որ Եվսեբիոսի հաղորդումը հայերի դեմ Մաքսիմիանոս կայսեր վարած պատերազմի մասին Մեծ Հայքին կամ բուն Հայաստանին չի վերաբերում։ Նրա կարծիքով Եվսեբիոսը նկատի ունի Կապադովկիայում, Պոնտոսի մի հատվածում, Կիլիկիայում և Միջագետքի վերին շրջանում ապրող հայերին[22]։ Մանանդյանն ընդունում է Դյուշեի[23] կարծիքը, որ Մաքսիմիանոսը «պատերազմ էր մղել ո՛չ թե քրիստոնեության դեմ Մեծ Հայաստանի, այլ հռոմեական Հայաստանի, այսինքն՝ անդրտիգրիսյան երկրներից մեկի դեմ»[24]։ Իսկ Գ. Սարգսյանի համաձայն կայսրը արշավել է Փոքր Հայքի և Արևմտյան Հայաստանի քրիստոնեական համայնքների դեմ, «որոնք հավանաբար անհանգստացնում էին նաև Տրդատին»։ Սարգսյանն այդ արշավանքը դիտում է իբրև կայսեր և Տրդատի միջև քրիստոնյաներին ճնշելու համար համագործակցության օրինակ[25]։

Բայց Եվսեբիոսի հաղորդումից այդպիսի հետևությունների դժվար է գալ։ Նա գրում է. «Հանդերձ սոքիմք յարեաւ և պատերազմ ի բռնաւորէն ընդդէմ Հայոց, որք ի սկզբանէ անտի բարեկամք և մարտակիցք էին Հռոմոց. զորս քրիստոնեայս և յերկրպագութիւն ճշմարտին Աստուծոյ փոյթս, նեղելով բռնաւորին ատելոյն Աստուծոյ՝ զի կռոց և դիւաց զոհեսցեն, փոխանակ բարեկամաց թշնամիս և փոխանակ նիզակակցած պատերազմողս ընդդէմ իւր յարոյց

գրականությունը IV դարում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 27. Խաչիկյանը գտնում է «շուրջ 313 թ.»։ К. Юзбашян, Некоторые проблемы изучения армяно-византийских отношений, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, № 3, էջ 42։ Հ. Հովհաննիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 34։ С. Арутюнов, Ю. Мкртумян, Армяне (տե՛ս «Расы и народы»; М., 1978, էջ 264)։ Վ. Նալբանդյանը ընդունում է 301—314 թթ. (տե՛ս «Литературная Армения», 1978, № 11, էջ 73)։

21 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 127։

22 А. Аннинский, Древние армянские источники, Одесса, 1899, էջ 68—69։

23 Duchesne, L'Arménie chrétienne dans l'histoire ecclésiastique d'Eusèbe (Melanges Nicole, Genève et Bale, 1905, էջ 103—109, հայերեն թարգմ. «Հանդես Ամսօրյա», 1910, էջ 268—271։

24 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 126։ Ի միջի այլոց Դյուշեն գտնում է, որ անդրտիգրիսյան երկրները քրիստոնեություն են ընդունել բուն Հայաստանի հետ միասին, երբ գտնվում էին նրա կազմի մեջ, այսինքն՝ 298 թ. առաջ (տե՛ս նշվ. աշխ., էջ 105—109)։

25 Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 223։

գնոսա... Արդ նա հանդերձ զօրօք իւրովք ի պատերազմի անդ ընդդէմ Հայոց ի բաղում ուրեք հարեալ վատթարէր առաջի նոցա»[26]։

Այստեղ խոսքը չի կարող անդրտիգրիսյան երկրների կամ Կապադովկիայի, Կիլիկիայի և Պոնտոսի մասին լինել, այլապես Կեսարացին կտար երկրի անունը Հայաստանի հետ չշփոթելու համար։ Եթե ուղղակի հայեր է ասվում, ամենից առաջ հասկացվում է բուն Հայաստանը։ Մի քանի տողի մեջ Եվսեբիոսը երկու անգամ շեշտում է, որ նրանք բարեկամ ու դաշնակից էին Հռոմին։ Եթե այդ երկրներից մեկը լիներ, Եվսեբիոսը այդպես չէր արտահայտվի։ Բարեկամ ու դաշնակից կարող է կոչվել անկախ երկիրը։ Իսկ Հռոմի կայսրության մեջ ընդգրկված երկրները կայսրության մասն էին և ոչ թե նրա բարեկամն ու դաշնակիցը։ Կայսրության մեջ ընդգրկված ժողովուրդների համար կարելի էր ասել հպատակ կամ, թերևս, հավատարիմ և օրինապահ, բայց ոչ՝ բարեկամ ու դաշնակից։ Այսպես, Հերոդիանոսը խոսում է գերմանացիների դեմ Մաքսիմինոս կայսեր (235—238) արշավանքի մասին, «նա տարել էր,— գրում է պատմիչը,— գրեթե ամբողջ հռոմեական բանակը, մեծ թվով մավրուսացոց նետաձիգներ, ինչպես նաև՝ օսրոյենցի և հայ աղեղնաձիգներ, որոնցից մի մասը հպատակներ էին, մի մասն էլ բարեկամներ ու դաշնակիցներ»[27]։ Ինչպես տեսնում ենք Հերոդիանոսը Հռոմի տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին կոչում է հպատակներ, իսկ ովքեր դուրս էին կայսրության սահմաններից՝ բարեկամ ու դաշնակից, և տարբերակումը որոշակի է։ Եթե Կեսարացին ասում է, որ Մաքսիմիանոս կայսրը արշավում է հայերի դեմ, որոնք բարեկամ ու դաշնակից էին, ապա խոսքը վերաբերում է անկախ երկրի՝ Մեծ Հայքին կամ բուն Հայաստանին[28]։

Կեսարացին ասում է, որ Մաքսիմիանոսը պատերազմ հարուցեց և պատերազմում էլ ջախջախվեց («վատթարէր առաջի նոցա»)։ Սեփական երկրի դեմ պատերազմ չեն հարուցում։ Մաքսիմիանոսը կարող էր ընդամենը պատժիչ արշավանք ձեռնարկել, և դժվար է ենթադրել, որ հռոմեական լեգեոնները կայսեր առաջնորդությամբ ջախջախվեին ընդամենը քրիստոնյա մի համայնքի դեմ պատերազմելիս, որ գտնվում էր Հռոմի տիրապետության տակ։

Կեսարացու համաձայն Մաքսիմիանոսը պատերազմ է հարուցում ոչ թե քրիստոնյա հայերի դեմ, քանի որ կան նաև ոչ քրիստոնյա հայեր, այլ հայերի դեմ, որ քրիստոնյա են, այսինքն քրիստոնյա երկրի դեմ։ Իսկ Հռոմի տիրապետության շրջանակներում անկարելի է, որ որևէ երկիր լրիվ բնակեցված լիներ հայերով ու լրիվ քրիստոնեացած և իր հավատի համար բախվեր Հռոմի իշխանությանը։ Նկատենք նաև, որ քրիստոնեության վաղ շրջանում կրոնական համայնքները չէին առանձնանում ազգային հատկանիշով, և եթե ասվում է հայեր, դա ավելի երկիր է ենթադրում քան համայնք։

311/2 թ. Մաքսիմիանոսը հարձակվել է Մեծ Հայքի վրա, որ արդեն քրիստոնեացած էր, և Կեսարացու հաղորդումը թույլ չի տալիս դարձի տարեթիվը 311/2-ից ավելի ուշ տեղաշարժելու։

---

26 «Եւսեբիոսի Կեսարացւոց Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 688—689 (IX, 8)։

27 Herodianus, Ab excessu D. Marci libri VII, ed. K. Stavenhagen, Lipsiae, 1922, էջ 180։

28 Աստուրյանը, առարկելով Դյուշեին, նույնպես ուշադրություն է դարձնում «բարեկամ» և «դաշնակից» արտահայտությունների վրա (Հ. Աստուրյան, նշվ. աշխ., էջ 265)։

Այժմ տեսնենք, թե ինչ ժամանակագրական հիմքի վրա է բարձրանում 314 թ.։

Հետևելով Աննինսկուն, Մանանդյանը Տրդատի թագավորության սկզբի մասին Խորենացու տվյալը համարում է անճիշտ և դիմում Սեբեոսին, որի համաձայն Տրդատը գահակալել է Դիոկղետիանոսի 15-րդ տարում, իսկ Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության ժամանակը հաշվում է ըստ Խորենացու։ Քանի որ Դիոկղետիանոսը կայսր է հռչակվել 284 թ., նրա 15-րդ տարին անում է 298[29]։ Խորենացու համաձայն Գրիգոր Լուսավորիչը հայրապետական աթոռին է նստել Տրդատի 17-րդ տարում։ 298-ից եթե 17 տարով հետ գնանք, ստացվում է 314։

Բայց խնդիրն այն է, որ Սեբեոսի համաձայն Դիոկղետիանոսի առաջին տարին ոչ թե 284-ն է, ինչպես իրականում, այլ՝ 261։ Սեբեոսը շփոթում է Դիոկղետիանոսի ժամանակը։ Այդ մասին մենք արդեն խոսել ենք[30]։ Թերևս պետք է երկրորդել. «Յամի ԺԳ երեքտասաներորդի կենարարին և փրկչին մերոյ Յս Քս թագաւորէ Դիոկղետիանոս»[31],— գրում է պատմիչը։ Այստեղ ԺԳ-ն հաշվված է հռոմեական թվագրությամբ, որ համընկնում է Քրիստոսի 261 թ.։ Հռոմեական թվագրության նոր փուլը սկսվում է 249-ից։ Ուրեմն, համաձայն Սեբեոսի, Դիոկղետիանոսը կայսր է հռչակվել 261 թ.։

Այդ թիվը ստուգվում է Սեբեոսի մի ուրիշ վկայությամբ։ Սեբեոսի (կամ Անանունի) ժամանակագրական աղյուսակում ասված է, որ Կարոսը Խառանի և Ուրհայի մոտ պատերազմեց պարսից դեմ և պարտություն կրեց. «Եւ ապա՝ ժամ եղև պատերազմ մեծ ի մէջ Խառանու և Ուրհայի, հարկանեն և վանեն զզօրն Յունաց. Եւ ի նմին ամի թագաւորէ Յունաց Դիոկղետիանոս»[32]։

Կարոսը Խառանի և Ուրհայի մոտ պարտություն չի կրել և չի սպանվել։ Նա պարսից դեմ վարել է հաղթական պատերազմներ և Տիգրիսի ափին մեռել խորհրդավոր մահով։ Իսկ նրա որդին՝ Կարինոսը, սպանվել է երկու տարի հետո՝ 285 թ. Մյուսիայում, Դիոկղետիանոսի դեմ պատերազմելիս։ Սեբեոսը Կարոսին տանում է ուրիշ միջավայր։

Խառանի և Ուրհայի մոտ ծանր պարտություն է կրել Վալերիանոսը, և Կարոսը շփոթվել է Վալերիանոսի հետ։ Պատերազմը տեղի է ունեցել 259—260 թթ.։ Սեբեոսը այդ ժամանակ է դնում Կարոսի վախճանը և որովհետև իսկապես Կարոսին հաջորդել է Դիոկղետիանոսը, ուրեմն համաձայն Սեբեոսի (Անանունի) Դիոկղետիանոսը իշխանության է հասել 261 թ., ինչպես հաշվված է բուն Սեբեոսի բնագրում։

Եթե այդպես է, Տրդատի գահակալության տարին ընկնում է ոչ թե 298,

---

29 298 թ., իբրև Տրդատի դահակալության սկիզբ, Աննինսկու և Մանանդյանի կարծիքով պատմականորեն ամենից ավելի հարմարն է։ 297 թ. Ներսեհի դեմ Գալերիոսի մեծ հաղթանակից հետո Հայաստանը ազատվեց պարսից տիրապետությունից, և Դիոկղետիանոսի կողմից Տրդատը թագ ստացավ (տե՛ս А. Аннинский, նշվ. աշխ., էջ 29—55։ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 102—116)։ Մենք փորձել ենք ցույց տալ, որ, անկախ Խորենացու ժամանակագրության, աղբյուրները Տրդատի թագադրումը ենթադրում են 298-ից շատ ավելի վաղ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 155—171)։

30 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 155—156։

31 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 132—133։

32 Սեբեոս, էջ 15։

այլ 275 թ. (261-ի 15-րդ տարին), իսկ Գրիգորի ձեռնադրությունը՝ 291 թ. (275-ի 17-րդ տարին)։

Սեբեոսի տվյալները Մանանդյանին ժամանակագրական հիմքեր չեն տալիս։

Բայց եթե ընդունենք, որ ճիշտ են բոլոր հաշվումները, միևնույն է, դարձի թվագրությունը չի ենթադրում «ճիշտ և ճիշտ Միլանի հրովարտակից հետո», որովհետև 314-ը ոչ թե Հայաստանում քրիստոնեության հաստատման, այլ Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության ժամանակն է։ Իսկ քրիստոնեության հաստատման թվականը ստանալու համար պետք է 3—4 տարով առաջ գնալ։ Ստացվում է 310—311 թթ.։

Դարձի թվագրման ելակետը մնում է նույնը՝ Տրդատի գահակալման ժամանակը, իսկ վերջին սահմանը՝ 310—311 թթ.։

Փորձենք վերադառնալ Խորենացու տվյալներին։

Պատմիչի համաձայն Խոսրովի սպանությունից որոշ ժամանակ հետո Տրդատը փախչում է հունաց կողմերը, և սկսվում է Անիշխանության շրջանը՝ «ժամանակս անիշխանութեան»։ Անիշխանությունն ավարտվում է Տրդատի գահակալությամբ։ Վերահաստատվում է Արշակունիների դինաստիան։

Բայց ե՞րբ է սկսվում Անիշխանության շրջանը։ Այստեղ կարևոր դեր ունի մի աղբյուր՝ SKZ արձանագրությունը, որ փորագրվել է Շապուհ I-ի հրամանով[33]։ Շապուհը խոսում է Եդեսիայի և Խառանի մոտ Վալերիանոս կայսեր դեմ տարած իր մեծ հաղթանակի մասին։ Ճակատամարտը տեղի է ունեցել 259 թ. օգոստոսի 29-ի և 260 թ. օգոստոսի 28-ի միջև։ Արձանագրությունը հաղթանակից շատ ուշ չի կարող թվագրվել, թերևս 262-ին, որովհետև այն կարծես հրովարտակ է, որով Շապուհը նշում է իր հաղթանակը և զոհաբերություններ սահմանում։ Այստեղ արքայից արքան իր որդուն՝ Որմիզդ-Արտաշիրին երկու անգամ կոչում է «Հայաստանի մեծ թագավոր»[34] և հրամայում նրան կրակ (Հրատն) շնորհել։ Որմիզդ-Արտաշիրը կարող էր հանդես գալ իր դերում իբրև «Հայաստանի մեծ թագավոր» 261 թ. ոչ ուշ և 260 թ. ոչ վաղ, որովհետև Վալերիանոսի պարտությունից և գերեվարումից հետո, Տրիբելլիոս Պոլլիոնի վկայությամբ, «Հայաստանի թագավոր Արտավազդը» նամակ է գրում Շապուհին և պահանջում աղատել դերված կայսեր[35]։ Նշանակում է Վալերիանոսի պարտությունից հետո Հայաստանում դեռ ուրիշն էր իշխում։ Դա եղել է պատմական փոքրիկ պահ և, թերևս, Արտավազդը կայսեր կապակցությամբ բռնած իր դիրքի պատճառով արագորեն հեռացվել է ասպարեզից և տեղը զիջել Որմիզդ-Արտաշիրին։

Պատմիչի համաձայն անիշխանությունը տևել է 27 տարի («ամս քսան և վեց և ամ մի»)։ Այնուհետև թագավորել է Տրդատը։ 260—261-ից եթե 27 տարով հետ գանք, կստանանք Տրդատի թագավորության տարին՝ 286—287։

Այդ նույն թվականը Խորենացին մեզ հաղորդում է ուղղակի. «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ և մանրախուզիւ քննեալ՝ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիա-

---

33 Տե՛ս M. Springling, նշվ. աշխ., (SII.Z-ի անգլ. թարգմ., էջ 14—26)։

34 M. Springling, էջ 17.

35 Scriptores Historiae Augustae (SHA), XII, III. 1—3.

նոսի»[36]։ Դիոկղետիանոսը կայսր է հռչակվել 284-ին, իսկ լիիրավ կայսր ճանաչվեց 285-ին, Կարինոսի սպանությունից հետո։ Նրա երրորդ տարին, եթե 284-ով հաշվենք, անում է 286, իսկ եթե 285-ով՝ 287։

Ինչպես տեսնում ենք SKZ արձանագրությամբ լիովին ստուգվում են Խորենացու տվյալները։ Պատմիչն Անիշխանության շրջանի, ինչպես նաև Դիոկղետիանոսի և Տրդատի առաջին տարիների վերաբերյալ ունի ճիշտ ժամանակագրություն։

Այժմ որևէ դժվարություն չկա որոշելու Հայաստանում քրիստոնեության հաստատման և Լուսավորչի ձեռնադրության տարիները։

Ինչպես գիտենք Խորենացին Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը դնում է Տրդատի 17-րդ տարում («Յեօթն և ի տասներորդի ամի թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զՀայրն մեր Գրիգորիոս և ըստ Ավետարանի ծնող»)[37]։ Եթե Տրդատը գահ է բարձրացել 286 թ., ապա նրա տասնյոթ տարին անում է 302 թ.։ Եվ եթե ընդունենք, որ դարձից մինչև ձեռնադրությունը կարող էր անցնել երեք տարի, ապա դարձը տեղի է ունեցել 299 թ.։

Այստեղ կարծես կա մի արգելք։ Ագաթանգեղոսը պատմում է, որ Գրիգորը Կեսարիայից իր հետ բերեց Հովհաննես Մկրտչի և Աթանագինեսի նշխարները. «Եւ իբրև դարձեալ գայր նա ի կողմանցն Յունաց՝ բարձեալ բերէր ընդ իւր նշխարս ինչ յոսկերաց մեծի մարգարէին երանելի մկրտչին Յոհաննու և զսուրբ վկային Քրիստոսի զԱթանագինէի»[38]։ Ըստ Բարսեղի վկայաբանության Աթանագինեսը նահատակվել է 303 թ. կրակի մեջ այրվելով[39]։ Եթե Լուսավորիչը ձեռնադրվելու համար Կեսարիա է գնացել 302 թ., հասկանալի է, չէր կարող իր հետ բերել մեկ տարի հետո նահատակված սրբի նշխարները։ «Անոնք, որ Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության թվականը 303-են առաջ կդնեն, նկատի առած չեն այս պարագան»[40],— գրում է Պ. Անանյանը։ Այդ պարագան պետք չէ նկատի առնել, որովհետև սոսկ վկայաբանական տեղի է և չունի պատմագիտական արժեք։ Եթե հիրավի Աթանագինեսը այրվել է կրակի մեջ, չէր կարող նշխարներ ունենալ, որ նշխարները բերվեին Հայաստան։

299 թ. իբրև Հայաստանում քրիստոնեության ընդունման և 302 թ. իբրև Գրիգորի ձեռնադրության տարիներ ոչ միայն արտածվում են ճշգրիտ ժամանակագրությամբ, այլև պատմականորեն հարմար պահ են արտահայտում։ Արդեն ավարտվել էր պատերազմը Հռոմի և Պարսից միջև Ներսեհի ծանր,

36 Խորենացի, Բ, 82։

37 Խորենացի, Բ, 91։

38 Ագաթանգեղոս, ՃԺԹ, 810։

39 «Վարք և վկայաբանութիւն սրբոց», Ա, Վենետիկ, 1874, էջ 67։

40 Պ. Անանյան, նշվ. աշխ., էջ 148։ Բայց այդ պարագան նկատի է առնվել. «Ս. Աթանագինեայ վրայ շատ խնդիրք կան,— գրում է Տաշյանը։— Նախ ըստ ընտրելագոյն և հնագոյն աւանդութեան (այսպէս Բարսեղ) Աթանագինէս՝ այրեցաւ 17 յուլիսի (ըստ ոմանց 302 Յ. Ք.)։ Եւ ուստի և նշխարքն ի Հայս դժուարաւ կրնային բերուիլ, միայն նորագոյն աւանդութիւնն (առ Մետափրաստեայ են) գլխատուած կդնէ։ Նաեւ Գրիգորի ձեռնադրուիլն նոյնիսկ այս թուէն յառաջ կուգեն ոմանք դնել, որով աւելի դժուարութիւն կելլէ։ Այլեւ բովանդակ Աթանագինեայ վկայարանութիւնն անվաւեր կը համարին, եւ ոմանք նաև շատ հին սուրբ մ'որուն վրայ շատ դիցարանական իրք կը պատմուին, այնպէս որ Կուիշմիտ «քրիստոնեական կերպարանաց տակ որսոյ պաշտպան դիք» մը կը նշմարէ» (Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 143)։

պարտությամբ (297 թ.) և կնքվել երկարամյա խաղաղության դաշն. Տրդատը ազատ էր զբաղվելու ներքին գործերով, իսկ Դիոկղետիանոսի կողմից քրիստոնյաների դեմ հալածանք դեռ չէր հարուցված։

Հայաստանում քրիստոնեության ընդունման տարեթիվը կարևոր է և պատմագիտական հետաքրքրություն է ներկայացնում։ Բայց խնդիրը թվի վաղեմության մեջ չէ։ Եթե նույնիսկ Տրդատ III-ը 313-ից հետո է քրիստոնեությունը ճանաչել իբրև պետական կրոն, դարձյալ դա կապ չունի Հռոմի հետ։ Միլանի հրովարտակը քրիստոնեությունը ազատ դավանելու իրավունք է տալիս, ոչինչ ավելի։ Իսկ Հայաստանում այն ձևը էր բերել պետական կրոնի ստատուս։ Անկարելի է առաջինից արտածել երկրորդը։ Պետական կրոնի հռչակումը տարբեր է ազատ դավանելու իրավունքից։ Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց շատ ավելի ուշ՝ Թեոդոս Մեծի ժամանակ (379—395)։ Բայց, որ կարևոր է, հենց բուն Միլանի հրովարտակը գիտության մեջ ճանաչված է անվավեր և անտեղի է նրան որևէ դեր տալ[41]։ Միլանի հրովարտակ չի եղել։ Այն հորինվել է այնպես, ինչպես «Կոստանդնի նվիրատվությունը», որ բացահայտվեց Լորենցո Վալլայի կողմից դեռևս XV դարում։ «Չկա ոչ մի վստահություն այն բանում, որ երբևէ հրատարակվել է նշանավոր Միլանի հրովարտակը։ Այն նույն հրովարտակը քրիստոնեական կրոնի իրավահավասարության մասին, որն իբր Կոստանդինը նվիրեց Միլվայի ճակատամարտից հետո, այն նույն հրովարտակը, որը Կոստանդինին հնչուն փառք բերեց առաքյալներին հավասար»[42]։

Այդպես, քրիստոնեության ընդունման փաստը նույնպես չի ենթադրում Հայաստանի քաղաքական շրջադարձ դեպի Արևմուտք։ Սասանյանների դինաստիական հեղաշրջումից հետո ուղղակի ավելի արտահայտիչ դրսևորվեց տարբերացումը երկու երկրների՝ Իրանի և Հայաստանի միջև։

Իրանի և Հայոց քաղաքակրթությունները հաղորդակից էին, բայց նրանց

---

41 «313 թ. «Միլանի էդիկտը», որով հավատի ազատություն էր տրվում Հռոմեական կայսրության ենթակա ժողովուրդներին, հայ թագավորի համար ունեցել է, դժվար է ասել հրամանագրի, թե սկսված գործը վավերացնող սանկցիայի իմաստ»,— գրում է Հ. Հովհաննիսյանն իր հետաքրքիր գրքում, որի խնդիրը քրիստոնեության մուտքը չէ (տե՛ս Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 34)։ Ինչո՞ւ վավերացնողի և ինչո՞ւ սանկցիայի և մի՞թե Մեծ Հայքը ենթակա էր Հռոմի կայսրությանը։

42 «От Христа к Константину», М., 1965, էջ 16։ Գիտական քննադատությունը անվավեր է ճանաչում Միլանի հրովարտակը, ելնելով երկու ժամանակակից պատմիչների՝ Լակտանցիոսի և Եվսեբիոս Կեսարացու հակասական տեղեկություններից։ Լակտանցիոսը, Միլվայի ճակատամարտից հետո 313 թ. Միլանում Կոստանդնի և Լիկինոսի հանդիպումը նկարագրելիս՝ ոչ մի ակնարկ չունի, թե նրանք համատեղ, քրիստոնյաների իրավահավասարության մասին հրովարտակ հրապարակեցին, նա հիշում է միայն Կոստանդնի քրոջ ամուսնությունը Լիկինոսի հետ։ Հասկանալի է, քրիստոնյա պատմիչի համար այդ դեպքը ավելի նշանակություն չէր կարող ունենալ, քան քրիստոնյաներին ազատ դավանելու իրավունքի մասին հրովարտակը, եթե այն լիներ, իսկ Եվսեբիոս Կեսարացին երկու իմպերատորների Միլանի հանդիպման մասին խոսում է իր պատմության 9-րդ գլխում, բայց, տարօրինակաբար, հրովարտակի բնագիրը բերում է 10-րդ գլխում, որ հետո է գրվել հեղինակի կողմից և միացվել «Եկեղեցական պատմությանը», ընդ որում հրովարտակի բնագիրը ոչ բոլոր ընդօրինակություններում է առկա։ Վերջապես, նույն հրովարտակը Լակտանցիոսը բերում է միայն Լիկինոսի անունով, որն այն հասցեագրել էր Նիկոմեդիայի կառավարչին։ Լիկինոսի այդ հրովարտակն է, որ Կեսարացին հետագայում ներկայացնում է Կոստանդնի անունով։

հունը մեկ չէր։ Դրանք գալիս էին առանձին էթնիկական ակունքներից, որ զուգորդվում էին իրար և չէին միախառնվում։

Հելլենիզմը մուտք գործեց իրանական աշխարհ, և Իրանը այն ընդունեց բարյացակամորեն, բայց, թերևս, անտարբեր։ Իսկ երբ Սելևկյան հարստությունն իրեն սպառեց, Իրանի բարձրացած պետականությունը գնաց այլ ուղիով։ Հելլենիզմը դանդաղորեն հաղթահարվում էր դեռ պարթև Արշակունիների ժամանակ։ Մ. թ. ա. I դարից զրադաշտականության նկատմամբ մեծանում է հետաքրքրությունը։ Արշակունիները հրամայեցին հավաքել և ամբողջացնել Ավեստան, իսկ Սասանյանների իշխանության շրջանում ազգային կրոնը դարձավ պետական քաղաքականություն։ «Կրոնը թագավորության հիմքն է, իսկ թագավորությունը՝ կրոնի հենարանը»[43]։ Այս արտահայտությունը, որ պահպանվել է Մասուդիի մոտ, վերագրվում է Արտաշիրին՝ Սասանյան դինաստիայի հիմնադրին։ Սասանյաններն իրենց համարում էին Աքեմենյանների իսկական ժառանգորդներ։ Թերևս, Լայնախոհ Աքեմենյաններին և նախանձախնդիր Սասանյաններին միավորող մի բան կա՝ Իրանի պետականությունը՝ բազմաշերտ ֆիլտր, որ անթիվ թափանցումներից զտեց ու պահպանեց իրանիզմը։

Հայաստանը նույնպես վաղուց մտել էր հելլենիզմի շրջապտույտի մեջ։ Եվ այստեղ էլ, ինչպես պարսից մոտ, գրեթե միաժամանակ Սելևկյաններն իրենց վախճանը գտան։ Բայց դա, հակառակ Իրանի, շնչանավորվեց իբրև հելլենիզմի վախճան։ Արտաշիսյանները, որոնց առաջին գահակալը ապրստամբեց Սելևկյանների դեմ և հաստատեց նոր հարստություն, հարազատ մնացին հելլենիզմին։ Հելլենիզմի ոգին պահպանվեց ու շարունակվեց նաև հայ Արշակունիների ժամանակ։ Դրա համար Հայաստանում ինչ-որ նախադիմքեր կային, որ թերևս պետք է փնտրել նաև երկրի էթնիկական շերտերում։

Աքեմենյանների շրջանում հայոց ազգային կրոնը կարծես ծածկվեց իրանական շերտով։ Աստվածների անուններն իրանացան, բայց պաշտամունքը՝ ոչ[44], որ թերևս, ավելի փոքրասիական-արևմտյան գծեր ուներ։ Խորենացին հիշում է մեհենական դպրության երեք կենտրոն՝ Մծբին, Պոնտական Սինոպ, Դարանաղյաց Անի։ Եթե այդ տվյալներով քարտեզ գծենք, այն կձգվեր Միջագետքի հյուսիսից պոնտական ափեր՝ հյուսիս-արևմուտք և չէր քերծի Պարսից սահմանները։ Հետաքրքիր է, որ հայոց պաշտամունքի խոշորագույն կենտրոնները նույնպես ընկած են արևմտյան գծի վրա, իսկ արևելքում՝ Պարսից ափերին փռված է մի ծավալուն սպիտակ շերտ։ Խորենացին չի տեղայնացնում մեհենական դպրությունը և ոչ մի ակնարկով։ Նրա համար միակերպ են հնչում Պոնտական Սինոպ, Դարանաղյաց Անի կամ Մծբին։ Նա չի էլ հիշում մեհենական դպրության լեզուն։ Պետք է մտածել, որ դա միաբնույթ էր։ Այդ ամենը հիշեցնում է զոնալ պաշտամունքային սիստեմ, որ պարսից դենի

---

[43] Masoudi, Les prairies d'or, Paris, 1861—1877, II, XXIV, էջ 162։

[44] «Իրանական թեոնիմիկայի թափանցումը Հայաստան,— գրում է Գ. Սարգսյանը,— այնուամենայնիվ ոչ մի չափով չի վկայում Հայաստանում իրանական զրադաշտականության արմատավորման մասին իր զուալիզմով։ Հայերը մնացին իրենց նախկին կրոնին, միայն մասնակիորեն փոխելով աստվածների անունները» («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 3, էջ 55)։

հետ սահմանագիծ ունի։ Հելլենիզմը ետ մղվեց և քրիստոնեությունը կանգ առավ հենց այդ սահմանագծին։ Սելևկյաններից հետո հայերը շարունակեցին մնալ հելլենիզմի կրողներ, և դա լայն բացված դարպաս էր, որով հաղթական ու հանդիսավոր մուտք գործեցին Քրիստոսի առաջին պատվիրակները։ Քրիստոնեությունը Հայաստանում, ինչպես փոքրասիական երկրներում, նոր էր, բայց ոչ պատահական։ Դա սերմ էր, թեկուզ քամու բերած, որ ընկնում էր հարմար հողի վրա։ Եվ քրիստոնեության ընդունումը իբրև պետական կրոն ոչ թե շրջադարձ էր Արևելքից Արևմուտք, որ ենթադրում է տարբեր սկզբունքներ, այլ՝ անցում մեկ աստիճանից մյուսը։

Բայց ինչո՞ւ ժամանակագրորեն նախ Հայաստանում քրիստոնեությունը ճանաչվեց իբրև պետական կրոն։ Դա որևէ չափով չի կապվում Հայաստանում քրիստոնեության լայնացման կամ տարածման հետ։ Փոքրասիական երկրներում այն շատ ավելի մեծ տարածում ուներ, քան Հայաստանում, բայց առաջինն այստեղ հաղթանակ տարավ։ Դա ավելի քաղաքական հանգամանքների արդյունք էր։

III դարը հռոմեական Արևելքի համար գնոստիկյան գաղափարների, հայտնությունների և աստվածորոնման շրջան է։ Աստվածներն ու մարդիկ իրար էին խառնվել։ Հռոմի դեմ գրոհող ժողովուրդները հուսախաբ եղան և թողեցին պայքարը, ավելի ճիշտ՝ փոխադրեցին հայեցողական աշխարհ։ Հերոսը դարձավ աստծո որդի։ «Քրիստոնեությունը հաղթեց այն պատճառով,— գրում է Էնշլենը,— որ պարտվեց Սպարտակը»[45]։ Այո, բայց պայքարը ոչ թե վերացավ, այլ փոխեց իր ձևը։ III դարում քրիստոնեությունը դեռ հանդես էր գալիս իբրև օպոզիցիա Հռոմի դեմ։ Հռոմը նրա մեջ ճանաչեց իր թշնամուն և երկար ժամանակ նրա հետ անհաշտ մնաց։

Գնոստիկյան գաղափարները թափանցեցին նաև Իրան։ Մանին՝ Արևելքի Քրիստոսը, կարողացավ համակել բավական լայն ոլորտներ։ Բայց դա կարճ տևեց։ Շապուհ I-ը նախ հրապուրվեց նրանով և ապա՝ հրամայեց կառափնարան տանել։ Մանիքեությունն իր հայեցողականությամբ չէր կարող ծառայել Սասանյան էքսպանսիային։ Նրա ոգուն շատ ավելի հարազատ էր զրադաշտականությունը, և հրապարակ եկավ Կարտիրը իբրև նոր առաքյալ։

Այդպիսով, խուսակիր աստծո պատվիրակներին, որոնք հավատ էին առաջարկում իբրև փրկագործության խորհուրդ, Հռոմը չընդունեց, իսկ Իրանը ետ վանեց։ Բայց հենց այդ պահին նրանք սիրով հյուրընկալվեցին հայ երդիկների տակ։ Տրդատը վերականգնեց Արշակունյաց իշխանությունը երկու կողմերի՝ Պարսից և Հռոմի համաձայնությամբ, որոնք թշնամի էին իրար։ Այստեղ նրանց շահերը համընկնում էին, և անտարբեր եղան հայոց դարձի նկատմամբ։ Սկզբում դա, նույնիսկ, կարծես նպաստավոր էր։ Պարսից համար այն ուղղված էր հելլենոսական Հռոմի դեմ, իսկ Հռոմի համար՝ զրադաշտական Իրանի։ Հայաստանը, սակայն, ուներ իր նկատառումները։ Դա անհամաձայնություն էր Հռոմին, որի համար Մաքսիմիանոս կայսրը 211/2 թ. պատժել ուզեց և դիմադրություն՝ պարսից, որը ավելի ուշ՝ 451 թ., փորձեց ճնշել Հազկերտը։ Դա մաքառում էր։

Եկեղեցաքաղաքական մաքառումը շարունակվեց և հետո, մեկի դեմ իբրև հավատ, մյուսի դեմ՝ հերձված։

---

[45] Շարլ Էնշլեն, Կրոնի ծագումը, Երևան, 1956, էջ 186։

САСАНИДЫ И ПОЛИТИЧЕСКАЯ ПЕРЕОРИЕНТАЦИЯ АРМЕНИИ В III ВЕКЕ

Доктор филологич. наук А. А. МАРТИРОСЯН

(Резюме)

В историографии было высказано мнение, что после прихода к власти Сасанидов в III в. Армения начала ориентироваться не на Восток, а на Запад. Именно этим будто бы обусловливалось утверждение христианства в Армении как государственной религии. Исходя из этой точки зрения, была пересмотрена традиционная датировка принятия христианства в Армении: ее перенесли на время после принятия Миланского эдикта (313 г.) как следствие изменения политики Рима в отношении христианства.

Мы считаем неверным связывать периодизацию истории Армении той поры с восточной или западной ориентацией и, основываясь на данных надписи Кааба-и Зардушт (SKZ), подтверждаем хронологические сведения Хоренаци о вступлении на престол царя Трдата III и рукоположении Григора Лусаворича. Согласно данным SKZ и Хоренаци, время установления христианства в Армении следует относить к 299 г.